№ 67 Ապրիլ 25 (Մայիսի 7) 1880 Ապրիլ 25 (Մայիսի 7) № 67

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի կէս տարվանը 6 ռուբլի
Առանձին համարները 5 կոպէկով

Փոխիլեսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ

Ծանրաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ"

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Ռացի կիրակի և ազգ օրերից)

Բայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Բայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ

ՌՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր պաշտպանած դատը.—Արտաքին տեսութիւն. «Levant Herald» լրագրի յօդուածը հայերի մասին. Նոմակ Թիւրքիայից.—Բայտարարութիւններ.—Բանասիրական խնդիր.

ՄԵՐ ՊԱՇՏՊԱՆԱԾ ԴԱՏԸ

Այն բաղդաւոր հետևանքը, որին մենք կարողացանք հասնել մեր գործունէութեան մի քանի տարվայ ընթացքում, հաշտութիւն քարոզելով լուսաւորական, կաթոլիկ և բողոքական հայերի մէջ, առիթ է տալիս մեր մի քանի բարեկամներին առաջարկել մեզ տպագրութեամբ բացարձակապէս յայտնել թէ ի՞նչ է եղել մեր շարժառիթը ազգութեան անունով հաշտութիւն քարոզել կրօնական միմեանց թշնամի բանակների մէջ, յարգելով իւրաքանչիւրի դաւանութիւնը:

Մենք այդ հարցին կը պատասխանենք այսպէս:

Ի հարկէ այդ հարցի մէջ մեր շարժառիթը գլխաւորապէս եղել է ազգութեան խնդիրը, բայց մասամբ էլ նոյն է եղել, ինչ որ ուրիշ նոյնանման խնդիրներում: Խերինք օրինակներ:

Հին սերունդը պէտք է հոփանաւորող լինի նոր սերունդի վերաբերութեամբ,—բայց մեր հասարակութեան մէջ պատահում էր հակառակը. պատահում էր որ հին սերունդը ճնշում էր նոր սերունդի վրա: Մենք մեր պարտաւորութիւնը համարեցինք, այդ դիպուածներում, պաշտպանել նոր սերունդը հին սերունդի դէմ:

Ցղամարդիկ շատ անգամ խիստ են դէպի կանայք,—բայց մի և նոյն ժամանակ մեծ մասամբ մերժում են տալ կանանց որ և է իրաւունքներ: Մենք միշտ արդար համարեցինք թոյլ կողմի դատը պաշտպանել:

Գիւղացին հարստահարված է վաշխառուից,—մենք գիւղացու կողմն էինք բռնում միշտ:

Կուսակրօն հոգևորականութեան մի քանի ներկայացուցիչները ճնշում են ներգործում աշխարհական հոգևորականների, քահանաների վրա,—մենք այդ վերջինները պաշտպանելու մեր պարտաւորութիւն ենք համարել միշտ:

Հայ-լուսաւորչականները ազգի մէջ ահագին մեծամասնութիւն կազմելով համեմատելով կաթոլիկ, բողոքական և մահմեդական հայերի փոքրիկ սակաւամասնութեան հետ, պէտք է իսկապէս մեծագոյն լինէին դէպի իրանց մէջ փոքրամասնութիւն կազմող այլադաւան եղբայրները: Բայց ընդհակառակն, լուսաւորչական հայերի ամբոխը ծաղրում, ճնշում, հալածում էր իր կրտսեր եղբայրներին: «Մշակը» հաւատարիմ մնալով իր ուղղութեանը, արդարութեան անունով պաշտպան հանդիսացաւ հալածված թոյլերի ընդդէմ ճնշող զօրեղ մեծամասնութեան:

Այսպէս միշտ արաւ «Մշակը» և այսպէս միշտ պէտք է անի, քանի որ գոյութիւն կունենայ: Նա միշտ պէտք է պաշտպանի թոյլերին, միշտ պէտք է յանձն առնի թոյլերի, տկարների, զրկվածների, անպաշտպանների դատը:

Եւ մենք համոզված ենք որ այդ տեսակ ուղղութեանը հետևելով, մենք վերջ ի վերջոյ միշտ յաղթող կը հանդիսանանք, որովհետև արդարութիւնը մեր կողմն է:

Գ. Ա.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«LEVANT-HERALD» ԼՐԱԳՐԻ ՅՕԳՈՒՈՒԱԾՔ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Բազմաթիւ խնդրուածք և շատ հարազատական պահանջումներ պիտի ընեն Արևելքի զանազան ազգերն և թշուառ քրիստոնեայք, երբ ազատական կուսակցութիւնն, անցնելով իշխանութեան գլուխը, պիտի կամենայ գործադրել այն խոստումները, զոր ըրաւ լորդ Պիկոնսֆիլդի դէմ մղած ժամանակ: Այն մեծ փաստաբանն, արդարութեան, բարոյականի և քրիստոնէութեան դատին այն մեծ փաստաբանն, որ, ընտրութեանց ժամանակ, կը թուէր ունենալ հարիւր բերան զգվելու համար պիւրիտներին, յոյներին, պուլգարներին և գարասաղիքին, այժմ նա կարօտ է Բրիտանիոյ ոչ հարիւր բաղուկ ունենալու, որպէս զի կարող լինի լրացնել ոչ միայն այն փրկութեան գործը, որ սկսուեցաւ հիսուսային իր սուրբ գաղնակցի կողմէ, այլ և նաև սխալ, ինչ որ աւելի գժուարին է, արգելել իր պաշտպանեալները (քրիստոնեաները), որպէս զի և գործ չը դնեն իրարու դէմ այն անգութութեան և բռնութեան ասրուեսան, որուն մէջ գերազանցած են շնորհիւ 4 դար գերութեան: Բայց, ոչ. Կլատստոնի արտաքին աշխարհավարութեան մէջ ցոյց տուած ճարտարութիւնը, պիտի ապահովէ, փաստ է ը, այս խնդրոյն լուծումը: Եւրոպական Թուրքիոյ ապագային կարգադրութեան մասին, ոչ. Կլատստոնի գործը պիտի ձիշտ լինի 5 մեծ տէրութեանց գործակցութեամբ, որը, հաւանականապէս, պիտի ունենան միշտ մի և նոյն համաձայնութիւնը և անշահախնդրութիւնը մէկ մէկի նկատմամբ, բայց Ասիոյ մասին, տէրութեանց դիրքը տարբեր պիտի լինի: Շնորհիւ Կիպրոսի գաշնագրութեան, Անգլիա տարբեր դիրք մ'ունի միւս տէրութիւններէն: Փոքր-Ասիոյ մէջ: Ոչ. Կլատստոնի չը պիտի մերժէ անշուշտ կատարել այն խոստումները, թէկուզ և ծանր, զոր իրը բեռ դրաւ ապագայ անգլիացի քաղաքագիտաց ուսին վրա լորդ Պիկոնսֆիլդի անտեսութեան, երբ Բարձրագոյն Դուռը, Բերլինի դաշնագրի 61 յօդուածի համաձայն, Հայաստանի բարեկարգութեան համար, Եւրոպայի դեսպանների հետ միասին, ստանձնեցաւ պարտաւորութիւն մտնել Հայերի հետ